ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ...



ՌՈՒԲԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ
(1934–2024)

Հայ դրամատուրգ, ռեժիսոր, արձակագիր Ռուբեն Մարուխյանը ծնվել է Երևանում: 1960 թվականին ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետը, Սերգեյ Օբրազցովի անվան տիկնիկային թատրոնի ռեժիսուրայի բարձրագույն դասընթացները: Աշխատել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: 1960–1970 թթ. ռեժիսոր է աշխատել Հայաստանի պետական հեռուստառադիոընկերության մանկական և երիտասարդական հաղորդումների խմբագրությունում: Աշխատել է նաև Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում, Երևանի պետական տիկնիկային թատրոնում՝ բեմադրող ռեժիսոր, գեղարվեստական ղեկավար և տնօրեն:

Հեղինակ է չորս տասնյակից ավելի բեմադրությունների, ավելի քան 25 գրքի: Մամուլում հանդես է եկել բազմաթիվ հոդվածներով: Մարուխյանի ստեղծագործությունները թարգմանվել ու տպագրվել են անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն, գերմաներեն, ռուսերեն:

Հեղինակել է «Ամենալավ տունը», «Իսկական ընկեր», «Խոսող ձուկը», «Ծաղրածու», «Չիկարելիի արկածները», «Մկնիկը» և այլ ստեղծագործություններ:

«Չիկարելիի արկածները» ստեղծագործության համար 1988թ. արժանացել է ՀՀ գրողների միության լավագույն մրցանակի: